

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴԱՆՈՒԹԻՒՆ, Ապրիլի փոքր
ՄՈՒԴԱԹՈՒՆ/ի ճիշտ դիմաց
Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒԹՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ
Մէկ անգամի համար տողը 3 շաբաթ
Մէկ անգամի անգամի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱՌԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
Տարեկան	100
Վեցամսեայ	55
Եռամսեայ	30
ՕՏԱՐ ԵՐԵՎԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան	26
Վեցամսեայ	14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՄ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՁՈՒՄ
ՈՒՆԻ ԵՒ ԴՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՓԱՐՈՍ

Լ. ՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒ ԵՐԵՎԱՆԻ, ՀԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ
ՏՈՐԵՆԸ-ԽՈՐՀԱՐԱՐ Զ. ԱՆՓԻՍԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԻՄԱՐԿԵՆ

ՊԵՐՈՒՆԻՆԻ մէջ բուռն վիճաբանութիւն
առաջ բերաւ Հոյսնայի կառավարութեան
կողմէ հաշտութեան համար եղած կարծեց-
եալ առաջարկութիւնը: Այնչափորութեամբ
կը սպասուէ անոր հրատարակութեան:
Ներշնչուած լրագրիւնները կարծիք կը յայտ-
նեն թէ գերման կառավարութիւնը տեղե-
կութիւն չունի այդ առաջարկութեան
հանգամանքն կամ պարունակութեան:

ՇԱՏ մը պատճառներ կան հաւաստելու
թէ հաշտութեան բացարձակ առաջարկու-
թեան մը իբրեւ նախնական պայման, և որ
և է բանակցութեան ձեռնարկելու առաջ Պո-
լիսի կողմէ պահանջներ որ Լորտ Միլնը
եւ կանտոնի հարաւային Ափրիկէն: Պոլի-
սիներ նաեւ պիտի հաւանին եւ կ'ընայ բա-
ցարձակ անկախութենէ՝ պայմանաւ որ
Խորհրդարան մը կազմուի, որ իրենց
ալ իրաւունք ունենան անգլիական միւս
զաղթաւարներուն հետ երեսփոխաններ զըր-
կելու, և կամ եթէ առիթ ալ չըլլայ, ա-
ռաւելուն իրենց թիւին համեմատութեամբ
երեսփոխաններ ունենալու Բարեկոյտի գաղթա-
ւարներ մէջ, որուն իրաւասութիւնները
այնքան ընդարձակուին որ հարաւային Ափ-
րիկէի անգլիական բոլոր ստացուածքները
պարունակեն: Բարեկոյտի Խորհրդարանը
ամենէն ընդարձակ ինքնօրինութիւնը ու-
նենայ, բայց «մէթո» իրաւունքը վերա-
պահուի Անգլիոյ Խորհրդարանին, Անգլիոյ
տէրութեան ընդհանուրին վերաբերեալ խըն-
դիրներու մասին:

ԲԱՐԻՍԻՆԻ ու Լոնտոնի լրագրիւններէն մէկ
քանին ծանուցած էին թէ Անգլիոյ թագա-
ւորը մօտեցաւ Բան կամ Նիս պիտի երթայ:
Լոնտոնի կարեւոր լրագիր մը միւս կողմէ
նիսէ իր թղթակցին մէկ հեռագիրը հրա-
տարարած էր ծանուցանող թէ Լոնտոնը Է-
մարտ 13ին Բան պիտի երթար: Այդ
լուրերը բոլորովին անհիմն են: Անգլիոյ
թագաւորին անձնական բարեկոյտը նա-
մակով մը ծանուց թէ Լոնտոնը թագաւո-
րը զարնան ուղևորութիւն մը կատարելու
մասին որ և է մտադրութիւն չունի:

ԴԵՍՊԱՆԵՐԸ անցեալ Թանվար 29ին
Բ. Դրան մօտ հաւաքական դիմում ընելով,
Հալէպի կուսակալ Էնիս փաշայի պաշտօ-
նականութիւնը պահանջած են: Այս տարա-
հրուած կուսակալը 1896ին Տիգրանակերտի
կուսակալ դառնալով, տէրութեանց ստիպ-
մամբ եւ կանչուած էր, ջարդերու ժամա-
նակ իր վարժունքին պատճառաւ:

Հիմա պաշտօնականութիւնը պահանջուելուն
պատճառն է իր յօդի վարժութիւնը, մասնա-
ւանդ ընդունաներու նկատմամբ:

ՊԱՂՏԱՏԻ երկաթուղին արտօնատէր
գերման իրաւատէրներու խումբը մտադիր է
Մէլքիսէն Ասանա գացող երկաթուղին գը-
նելով իրեն դիմի միացնել որպէսզի այս ե-
ղանակաւ Պաղատի գիծը ուղղակի հա-
ղորդակցութեան մէջ գտնուի Միջերկրական
ծովու հետ:

Բ. ԴՈՒՆԸ մեծապէս փափաքող կը տես-
նուի մեծ տէրութիւններու հետ առեւտրա-
կան դաշնագրեր կնքել, որպէսզի կարենայ
մաքսային նորոգականները գործողութեան
դնել: Իր խնդրանքը չլրացող Անգլիան հաւա-
նեւ է սկսուած բանակցութիւնները շարու-
նակել:

ՊՐԻՆԻՍԻՆԻ կը ծանուցանեն թէ Պե-
րիսի թագաւորը մերժեւ է ընդունել Մի-
նիս պէյը, Թուրքիոյ Բարիդի գետաւանը,
որպէս որ ալ Սուլթանը այս պահանջը
նաեւ Պրիսիին գետաւան կարգած և իրեն
զաշտուն տուած ըլլայ իր մէկ ինքնագիր
նամակը յանձնելու Լիւրդոյ թագաւորին:

ՃԱՄԱՐՈՒ ՆՈՐԵՐ... ԱՆՎՃԱՐ ՄՆԱՅԱՆ

Երբ «Օսկանիէն» իր պարանները քակեց
ու կամաց կամաց բաժնուցաւ ժողովրդի
ազգայնէն, Բարեկեան սիրելիներուն յիշա-
տակին հետ տանելով նաեւ 200 տոպրակ
դեմաւաններ, Մասնէյը բեղողուած՝ Բոր-
Սայիտի համար, հոգոյս մէջ զգացի այն
անհուն պարապը զոր այնքան յաճախ ըզ-
գացած եմ, աւագ, զրպանիս մէջ:

Ճաշի զանգակը, բարեբախտաբար, շուտ
հնչեց, խոտախալով մեզ փրկել գոնէ ստա-
մոքսի պարապութենէն: Ծովը խաղաղ էր
բարձր մը առաջ հաղորդութիւն առնող
վաշխառուի մը խղճմտանքին պէս ու կե-
րակութեանը համեմէ՝ անվառ կատակներու
նման: Այս երկու իրողութեանց զուգաւո-
րումը, լաւագոյն է ըսել ամենանշանակա-
լի, չխրոչեցնելու համար բարեմիտ ընթերցողը,
բաւական եղաւ սեղանին վրայ դրարթու-
թեան մը ծնունդ տալու:

Ու երբ ճաշէս յետոյ ելայ կամուրջին
վրայ, օրդէն գոհ ու զուարթ էի մարդու մը
պէս որ թրանվային առիթ ջանջախուելու մի-
ջոցին՝ ոտքին մէկը կոտորելով կ'աղատի:
Մտքի այս տրամադրութեան մէջ միակ մը-
տածումս եղաւ մշակել (բան մը որուն փոր-
ձառութիւնը ունիմ իբր աղարակի նախկին
պաշտօնեայ) որեւէ յարաբերութիւն մը հոն
գտնուող ուղևորութիւններէն մէկուն հետ:

Նախ անցայ անգլիական մը քովն որուն
պարտաւորիչ գովասանքի մը պէս տափակ
յետոյքը բոլորովին անտարբեր թողուց զիս,

և ուղղուեցայ շոգնաւին եզերքը հակած
Քրանուհիի մը մօտ զոր սեղանակից ու-
նեցած էի և որու զիմադիմներուն կանո-
նաւորութիւնը իցիւ թէ իրենց օրինակ առ-
նէին Աղեքսանդրիայի ընտրողական ժողովի
պատուարման անդամները՝ թաղական խոր-
հրդի քուէարկութեան պահուն:

Խարդախ գանձապետի մը հաշտաւետ-
քէն աւելի պղտոր ու շփոթ՝ մօտեցայ իրեն,
ջանալով անմիջապէս բանալ, ոչ թէ կործ-
քին մէկ մասը, ինչպէս գուցէ երթալիս
«Փարոս» թերթի ու զուարճաւոր ընթեր-
ցողներէն ոմանք, այլ պարզապէս խօսակ-
ցութիւն մը:

— Ի՞նչ տպաւորութիւն կ'ընէ ձեր վրայ,
ըսի յանկարծ, զիշերը, շոգնաւին մէջ,
ճամբորդութեան միջոցին...

— Ահ, պարոն, պատասխանեց Քրան-
ուհին, կ'ուզէք որ անկեղծօրէն բացատ-
րեմ զգացածս, խոր միտութեան մը տպա-
ւորութիւնը:

— Չարմանալի՜ բան:

Այն տպաւորութիւնն էր:

— Եւ ձեր վրայ, պարոն, հարցուց ին-
ժի, ի՞նչ տպաւորութիւն կ'ընէ այս անաս-
նան ծովը:

— Իմ վրաս, տիկին, այս անասնան
ծովը... անհուն ջրակոյտի մը տպաւորու-
թիւնը:

Այս սրամիտ խօսակցութիւնը գոցեց
Թրանուհիի տառերական տեսութիւններուն չափ
երկարքը. եթէ թէյի հրաւիրը չհնչէր:

Պէտք է ըսել որ հետեւեալ օրը վերըս-
կանք մեր սիրաբանութիւնը, որ գուցէ Պոլ
և Վերքիլի կամ Փիեթրո ու Պալմիլի կու-
սակաւորութիւնը չպահեց մինչև ետքը: Ու
ճամբորդութեանս հինգ օրերը սահեցան
անցան աւելի արագ քան պարտաւորահալի
մը պայմանաւաճումը:

«Օսկանիէն» հասաւ Բոր-Սայիտ: Դուրս
ելայ գլխիսը, հոն ձգելով բարեկամուհիս
որ Հնդկաստան կ'երթար... Ու այսպէս
յանկարծ զարեցաւ այս վաղանցուկ հով-
ուերգութիւնը, տարիէ մը ի վեր չվճարուած
«Փարոս» թերթի բաժանորդագրութեան մը պէս:

Տխուր ու սրտաբեկ, երբ ինքզինքս ա-
ռանձին դտայ նաւամատուցին վրայ, ֆէլաւ
իշխաններու մէջ, այնքան թարթափուն
էի ու միտքս այնքան զբաղկաւ որ ժամերով
հովանոցս բացած, փողոցները ջրող կառքի
մը ետեւէն զացի, կարծելով թէ տեղաւա-
րաւ անձերի օրով մը սիրելի մը դադա-
ղին կը հետևիմ:

ԵՐՈՏ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ն. Բ. Խալիլը, ինչպէս անցեալ
տարի, այս տարի նոյնպէս 20 ոսկե-
ւոյ գումար մը բարեհաճած է զրկել
կիրակի զիշերուան թատերական ե-
րեկոյթը կազմակերպող Յանձնաժո-
ղովին:

— Գեր. Այվազեան Եպիսկոպոս հե-
տեւեալ շնորհաւորական հեռագիրը
ուղղած է Աղեքսանդրիայէն առ Ն.
Բ. Խալիլը, նորափթիթ իշխանին
ծննդեան առթիւ:

Նորին վսեմութիւն
Մեծ Արարողայն
Նորին Բ. Խալիլին
Ի Գահիրէ

Կը ինքրեւ բարեհաճեց հաղորդել Եպիս-
տոսի Հայ գաղութին և իմ անկեղծ շնոր-
հաւորութիւնները և լաւագոյն բարեմաղթու-
թիւնները առ Նորին Բարձրութիւնը՝ նո-
րափթիթ իշխանին ծննդեան առթիւ որուն
երկար և երջանիկ տարիներ կը մաղթեմ:

Առաջնորդ Հայոց Եպիսկոպոսի
ԱՅՎԱԶԵԱՆ

Մեծ արարողայն հետեւեալ պա-
տասխանը հեռագրած է Գեր. Այվազ-
նորդին:

Ն. Գ. Այվազեան Եպիսկոպոս
Առաջնորդ Հայոց
Աղեքսանդրիա

Նորին Բարձրութիւնը իր շնորհալու թիւն-
ները ձեռն կը յայտնէ ձեր ազնիւ բարե-
մաղթութեանց համար:

ՄԵԾ ԱՐԱՐՈՂԱԳԵՏ

— Այս պահուս մեր աչքին առջև ունինք
«Արտէմիս» թաղին թիւը որ իր ճոխ և
զեղեցիկ պարունակութեամբ հրատարակ-
չաւարակութիւն մըն է որ կրնայ զոհա-
ցընել ամենէն գիտաբաններն իսկ:

Կեանքական գրականութեան այդ անգրա-
նիկ աղջիկը նորին և նազելի, կոշտած է
յեղաշըռմ մը բերել մեր գրականութեան
մէջ անոր միօրինակութեան մէջ սիրուն նո-
րութիւն մը սպրդեցնելով:

«Արտէմիս» թերթաւոր խմբագրութիւն,
Օր. Մառի Պէյրեանի ծրագրած ուղղու-
թիւնը չի կրնար բայց եթէ իրաւունք իւր ա-
մեն կողմէ անխտիր, որովհետեւ առաջադ-
րուած գործը օգտակար է և անհրաժեշտ:
Մեր ջնքով շնորհաւորութիւնները ներկա-
յացնելով «Արտէմիս» թերթաւոր խմբա-
գրութեան, կը մաղթենք որ այդ պար-

Խ. Տ. Ե. Մ. Ի. Բ. Զ. Ե. Ա. Ն.

ԱՅՎԱԶԵԱՆ

ԿԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕԹԷԼ ՇԷՓԸՐՏՅՈՒ ԴԵՄԱՅ

Երեւորական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ
ակուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և
նման կեղծ ակուաներու, քանիքներու ոսկիէ, ալիւմինիումէ, ֆալսիւ է:
Ապահով և տոկուն քրօնպաճ ոսկի, բլաթին, կալէն, կալին: Վիտեքս
հիւանդութեանց դարսանում երեւորական և ուրիշ միջոցներով:

բերականը գտնել այն յաջողութիւնը որ սոս-
վորաբար խոյս կուտայ առնական ձեռքերէ:
ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Կիրակի գիշերուան ներկայացումը թէ՛
արուեստագիտական և թէ՛ նիւթական յա-
ջողութեան տեսակետով շատ փառաւոր ե-
ղաւ, շնորհիւ այն ջանքերուն զոր մասնա-
խումբը չէր զլացած այդ պիտութեան տօնը
փառքուն ընելու համար:

Սրահը գրեթէ ամբողջովին լեցուն էր
select բազմութեամբ մը որ երոպացի
տարրը մեծագոյն տեղը կը գրաւէր:

Օթնակները ակնախտիկ տեսարան մը
կ'ընծայէին զիտողին աչքին:

Գահիրէի բարձր դասին պատկանող դե-
ղանի կիներ և ականաւոր անձնաւորութիւն-
ներ կը զարդարէին անոնց յենարանին իւս-
ւիշները և երբ ներկայացումը սկսաւ՝ Օթե-
րայի սրահը իր մեծ օրերու պատկերը կը
ներկայացնէր որուն համար գործածուած
une superbe chambre բացատրութիւնը
ճշգրիտ գաղափար մը կուտայ «պարզ»
գասակարգին:

Ներկաներու մէջ նշմարեցին Ն. Բ.
Բրէնս Մուհամմէտ Ալի, Սիբիլ Վիտալիմիովիչ
մեծ գութը, Ն. Ա. Բ. Սիմիլի գահաժառանգ
իշխանը, Ժէնըալ Թալաթ, Պ. Հորաս
Էլլիս, Լիտի և Օր. Օ'Հոլան, Օր. Վիկտոր-
ֆիլա, Տիկին Ուորտֆորտ, Տիկին Համիլ-
թըն Վիլլիս, Ն. Վ. Պոլոս փաշա Նուպար,
և Օր. Նուպար, Առաքել Պէյ Նուպար,
Օր. Ինճէ ա'Ապրո, Տիար և Օր. Տըլօմպէ,
Տիար և Տիկին Տէ Սալ ա'Էրինաւ, Գլխ-
գապա Ուօրըր, Պ. Կէյ Լիսաք, Տիար և
Տիկին Մարիոսֆ պէյ, Գոմանուս փաշա և Օր.
Գոմանուսները, Տիար և Տիկին Աթանաս-
քի, Ալտալա պէյ և Տիկին Սֆէր, Տիար
և Տիկին Բիւ պէյ Կէյ և Կէյ:

Թատրոնի թիւ կարճ-նեղակայացում
մը Կէյ Էստորը անցած վերջացաւ՝ սա-
կայն շատ զուարճացուց հանդիսականները
որոնք շարունակ ծափահարեցին դերակա-
տարները որոնց մէջ կը փայլէին Պ. Պ.
Նուլլէ, Ժիբէ և Տիկին Կոմս:

Մէկ բառով գեղեցիկ երեկոյթ մըն էր
կիրակի գիշերուանը որուն համար պէտք է
շնորհաստեղծ Մասնախումբը և ի մասնաւո-
րի Տիար Յակոբ Օհանեանը որ այս առ-
թիւ մեծ գործունէութիւն մը ցոյց տուաւ
արդիւնաւորելու համար ներկայացման հա-
տոյթը որ 250 ոսկիի մօտ կը հաշուուի:

—Աղքատներու յաջողութիւնն ալ պիտի
տեսնան իրենց երեկոյթը:

Թատրոնի Մարտ 5ին Զիլիկիայի թատ-

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (60)

ԺԵՂԱՆ ՏՆՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՌԱՐՔԵՐԻ ՆԵՐՇՆՁՈՒԱԾ ՎԷՊ

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ինչ որ այդ ողջիկը կ'ըսէր, մարմինը
տակաւին գանակոծութիւնն կոչուած, Ժե-
րմէն երբեմն ինքններն խոստովանած էր
զանոնք, բայց չէր ուզած համոզուիլ. հի-
մայ կը տեսնէր թէ ո'րչափ իրաւունք ու-
նէր Սթա Ապուհա, այո՛, իր ջանքերը ըն-
դունայն էին, իր կամքը՝ անգործ: Այն բնի
մը բարեբը զոր բրած էր Սթա Ապուհային՝
չէր փոխարինէր, աւա՛ղ, այն ամենը որ

րոնին մէջ պիտի ներկայացուի Սթա Սանի մեծ
օրերան «Մասնաւոր և Տարբեր» ինչպստա Սթ-
քատախնամ ընկերութեան:

Եւ երբ ըսենք թէ այս անգամ ալ Տիար
Զարեհ Սթապլըն է որ յանձն առած է
կազմակերպել այդ բարեգործական երեկոյ-
թը, հիմակուց կրնանք ապահովել խոշոր
յաջողութիւն մը որ պիտի զարմանէ այն-
քան խեղճութիւններ:

—Տիար Զարեհ Սթապլըն որ իբրեւ աշ-
խարհիկ մարդ իր մասնաւոր տեղը ունի
Աղքատներու կենցաղասէր գասուն մէջ,
հրաւիրագրեր ցրուած է արուստագիտական
երեկոյթի մը համար որ տեղի պիտի ու-
նենայ այս գիշեր իր մեծածնի սրահներուն
մէջ:

Օրերայի խումբին լուսողոյն արթնութիւն-
քը իրենց աշակցութիւնը պիտի նուիրեն
այդ երեկոյթին:

Եւ որովհետեւ ամեն հաճոյք հրապոյր
չունի որքան որ մարդու փորը կուշտ չէ,
Տիար Սթապլըն իբրեւ ճշմարիտ Սիովիտացի
մը, իր հրաւիրեալներուն մեծ հացկերոյթ
մը պիտի տայ որուն անմիջապէս պիտի
յաջորդէ soiréén:

Թերթիւն բաժանորդագիրներու գան-
ձումը զիւրապնելու նպատակաւ որո-
շեցինք այսուհետեւ թղթատարական
վարչութեան recouvrement ճիւղին
յանձնել մեր ընկալագիրները՝ գան-
ձուելու համար:

Զայս ի գիտութիւն մեր բաժա-
նորդաց ծանուցանելով, կը յուսանք
որ ասոնք փութկոտ պիտի գտնուին
լաւ ընդունելութիւն մը ընելու մեր
այս կարգադրութեան:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ՓԱՐՈՍ», Ի

Կ թ. Ա. Տարմշթատ (Գերմանիա).—
Ստացանք ձեր բառը և ըստ ձեր յանձ-
նարարութեան ցրեցինք «Փառք» թիւին
վար Այն սկսեալ թիւերը: Կը ինչոքեք ա-
ռաջին տոթիւ մեզ ուղարկէք բաժանորդա-
գիրը ըստ ծանուցման:

Տօք. Ն. (Թիֆլիզ) Հաղար շնորհակա-
լութիւն ձեր թանկագին աշակցութեան
համար:

Ս. Ս. Աղեքսանդրիա. — Օտանը՝ Օտ-
եան չպիտի ըլլար եթէ ան ալ ձեզի պէս
մտածէր:

Օր. Պ. — Ապագային թերթ:

ՔԱՂՈՒՄԻՔ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԷ

Խառն Ժողովը որ գումարուեցաւ անդեալ
շաբաթ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, նա-
խագահութեամբ Ս. Պատրիարքին և ատե-
նագետութեամբ Տիգրան Էֆ. Եւուսֆեանի:

տակաւին կար ընկեր. միակ արարած մը
չի բաւեր ցեղ մը կատարելագործելու հա-
մար. տակաւին տարիներով յարատեւութիւն,
իրեն անձնաւորութեան նման հաղաբա-
ւոր անձնութիւններ պէտք էին օխո-
փանք մը բերելու համար այդ ցաւերուն,
ճակատագրականապէս ստրկութեան մատ-
նուած այնքան էակներու բարոյական մա-
կարդակը բարձրացնելու համար:

Կէս գիշերուան մօտ, Սթա Ապուհա
կարծես աւելի յոգնած երեցաւ, և իբրեւ
շնորհ խնդրեց որ մինակ մնայ:

—Պիտի տեսնէք թէ ինչպէս պիտի բը-
նանամ, ըսաւ դաստիարակուհին որ կը
վարանէր մեկնելու, «ակալի պարտաւորուեցաւ
աղջկանը փափաքին հանդէպ տեղի տալու
և իր յատուկ սենեակը դարձաւ, առաջագրե-
լով որ քանի մը ժամէն դարձեալ ըզլը երթայ:
Իր քաղերուն ձայնը նրբուղիներուն

Ներսիս Էին Կրօնական Ժողովին՝ Տ. Գրի-
գորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեան, Տ.
Վահրամ Եպիսկոպոս Մանուկի, Տ. Կա-
րապետ բազանայ Սահալան, Գաղա-
քական Ժողովին՝ Գրիգոր Էֆ. Խոսեան,
Գրիգոր Էֆ. Գարակէօզեան և Տիգրան Էֆ.
Տ. Ներսիսեան:

Ժողովը միաձայնութեամբ պատճառա-
բանեալ նկատեց Տ. Գրիգոր Սրբազանի հը-
րածարականը, միեւնոյն ատեն յայտարա-
րելով թէ վարչութեան փափագն է Ն. Սրբ-
բազանութիւնը տեսնել Կիլիկիոյ Կաթողիկո-
սական աթոռին վրայ, ինչպէս կը բաղձան
Կիլիկիոյ վիճակայինները: Ժողովը որոշեց
ինչպէս Երեցեան Սրբազանէն, որպէսզի իր
պատճառները պարզէ, յայտարարելով թէ
վարչութիւնը պարտաւոր է ամեն դիւրո-
թիւն ընծայել Ն. Սրբազանութեան:

Կարգադրեցաւ. Կայսերական այն իրա-
տին, որով աղաղային Վաղֆէն Սիւրտարի
մէջ Կարապետ Գալթայէն մահչիւղ մնացած
գետնին վրայ սրբանոցի մը կառուցումը
կ'արտօնէր: Ժողովը յանձնաժողով մը կազ-
մեց ընելու համար պայմանները որքանո-
ցին շինութեան, որ պիտի կատարուի Գա-
րակէօզեան կողմով: Այդ յանձնաժողովին
անդամներն են Խաղբեան Գրիգոր, Գա-
րակէօզեան Գրիգոր և Սիթեան Միհրան
Էֆէնտիները:

Գրիկ առաջնորդութեան հրաժարական
տուած էր Տ. Վահան վարդապետ Յակոբ-
եան, «ակալի Ժողովը անընդունելի գտեց
անոր հրաժարականը:

Էնիկիլիի առաջնորդական ընտրութեան
տեղեկակցիւր Զայեան Էլլիս Էֆ. յանձ-
նուեցաւ՝ ընելու համար:

—Ս. Հայրապետը բարեհաճած է վարչա-
պետական ականակուտ լանջախաչ շնորհել
հեանեալ վարդապետներուն:— Կարոյ Ա-
ռաջնորդ Տ. Զաւեն Ծ. վարդապետի, Արար-
կերի Առաջնորդ Տ. Մաշեղ Ծ. վարդա-
պետի, Մշոյ Պատրիարքական փոխանորդ
Տ. Խոսրով Ծ. վարդապետի, Շապին Գա-
րահիսարի Առաջնորդ Տ. Սիմեոն Ծ. վա-
րդապետի, Արմաշու միաբան Տ. Աղան Ծ.
վարդապետի, Երզնկայի Առաջնորդ Տ. Դա-
նիէ վարդապետի, Ուրֆայի առաջնորդ
Տ. Անանիա վարդապետի՝ իբրեւ վարձատ-
րութիւն անոնց առ Եկեղեցին մատուցած
բարեք ծառայութեանց: Ասոնց խորհրդա-
չիւրին զատ զատ կոնգրակներ զրկուած են
Պատրիարքարան, իսկ խաչերը դեռ զրկուած
չեն: Լանջախաչ ընդունողներն կը յիշուի
նաև Արմաշի միաբան Տ. Բաբէլէն վարդա-
պետ Կիլիկեան:

— Տ. Գրիգոր Սրբազանի հրաժարականը

խորհրդուն մէջ կորուսելուն պէս, Սթա Ա-
պուհա կանգնեցաւ, ականջ գնելով, գէթը
չսղոյն, բոլոր մարմինը հրատապ տենդ մը
բոցատոցոր, նայուածքին մէջ անբնկճելի
կամք մը զրոշմուած, անկողնէն վար սա-
հեցաւ իջաւ, և անտանելի ցաւի մը դի-
մանալով, գաւիթը հասաւ, նրբանցը, ծայ-
րը, պաշարներուն յատկացեալ սենեկին մէջ
սառնոցը կար: Երբեմն, երբ խամօնը չա-
փազանց սառտիկ կը փչէր, երբ պաշարին
բոլոր սենեակները անհնալիկ կը թուէին,
հանրմը սառը մը բերել կուտար, հոն
կ'ընկողմանէր ու կը ընանար, այն ձմերա-
յին մթնոլորտին մէջ զոր սառը կը հա-
զորէր յարկաբաժինին:

Սառնոցը շատ մեծ էր, գրեթէ դարան
մը, որ սենեկին ամբողջ մէկ կողմը կը
բռնէր. ներսի կողմէն գոցուած էր երկա-

պատճառաբանեալ նկատուելով անընդունելի
գտնուած էր: Այդ մասին Ս. Պատրիարքը,
Խառն Ժողովին հաւանութեամբ, պաշտօնա-
գիր մը ուղղելու որոշում տուած էր Տ. Գրիգոր
Սրբազանի. և այդ պաշտօնագրին խմբադ-
րութիւնը յանձնուած էր Պատրիարքարանի
իւրաքանչեւ Թեմիսեան Բարթող Էֆ. Ի, որ
այդ գիրը անմիջապէս պատրաստելով շա-
բաթ օրը զրկեց Ս. Պատրիարքին: Այդ
ընդարձակ պաշտօնագրով Ս. Պատրիարքը
պատասխանած է Երեցեան սրբազանի գը-
րած նամակին, որուն մէջ Ն. Սրբազանու-
թիւնը իր հրաժարականը վերջնական նը-
կատած էր: Ս. Պատրիարքը իբրեւ նախա-
գահ Աղգ. Վարչութեան՝ մանրամասն կեր-
պով պատասխանած ու պարզած է Երեց-
եան Սրբազանի, իր հրաժարականին հե-
տեւութեան, և կը խոստանայ բոլոր անար-
կութեանց առաջին անգամ, Աղգ. Վարչու-
թեան անդամներուն հետ միասին: Ս. Պատ-
րիարքը, շաբաթ իրիկուն, այդ Պաշտօնա-
գիրը յանձնեց Պատրիարքարանի արձա-
նագրութեան զիտանի տեսուչ Միգրան Էֆ.
Մեղիքեանի, որ Ս. Պատրիարքի տունը
հրաւիրուած էր Կիրակաւուտքին առթիւ:
Մեղիքեան Էֆ. երկի տարաւ յանձնեց այդ
պաշտօնագիրը Երեցեան Սրբազանի:

—Զուգը ապագայի կտակի մասին ասիւ
առաջ գրած էինք թէ Պաշոյ աւստրիական
հիւպատոսարանը ի մօտոյ մանրամասն յայ-
տարարութիւն մը պիտի ընէր անոր գոր-
ծադրութեան պայմաններուն վրայ: Այս օ-
րերու հրատարակութեան տրուեցաւ այդ
յայտարարութիւնը, որուն համաձայն,
2000ական ֆրանք տարեթոշակով, մէկը
Աւստրիացի և մէկը Հունգարացի երկու հայ
ողջը պիտի ընդունուին եւրոպական բարձ-
րագոյն վարժարանի մը մէջ արուեստական
գիտութեանց, երկրագործական կամ ազատ
արուեստներու հետեւելու համար: Գաւա-
զողները սինչն յունիս 15 պէտք է զիմեն
մայրաքաղաքի աւստրիական հիւպատոսա-
րանը, ներկայացնելով իրենց ծննդեան և
ուսման, բարի վարքի և չքաւոր ըլլալու
մասին վկայականներ: Ասոնց պէտք է կըց-
ուի նաև վկայական մը, տրուած եկեղե-
ցական իշխանութեան կողմէ, հաստատող
թէ ներկայացողները բաւականաչափ տեղ-
եակ են հայերէն լեզուի և պատմութեան:
Ասիկ զատ չափահասութեան վկայական
մըն ալ պիտի պահանջուի: Այս ուսանող-
ներէն մէկը աւստրիական և միւսը հուն-
գարական հպատակ պիտի ըլլայ: Տարե-
թոշակը առ առաւելն 5 տարի պիտի տըր-
ուի: Գիտողները պէտք է որոշեն թէ ո'ր
վարժարանին մէջ կ'ուզեն կատարելագործել
իրենց ուսումը:

Թապաւոտ դուռով մը, երեք յարկ ունէր. ա-
ռաջին յարկին տակ, զինկով պատած արկ-
ղի մը մէջ սառի կտորներ կը քնէին ամեն
առաւօտ:

Սթա Ապուհա դուռը բացաւ, առաջին
յարկին վրայ կիսամերկ պառկեցաւ, յիմոյ
մէկ ձեռքովը գուռը իր վրայ փակ պահելով՝
սպասեց:

Այս գաղափարը յղացած էր իր տան
ջանքը իրեն իմացնելուն պէս. երկար ժա-
մանակ չպիտի կրնային զինքը խոշտանգել
և խոյս պիտի կրնար տալ այդ ահակի՛ ա-
մուսնութենէն...:

Անձնասպան ըլլալով Ժերմէնի պատ-
ճառելիք կսկիծին գաղափարը պահ մը կա-
սեցուցած էր զինքը. բայց յորմէնեւեկ այդ
ապահով և հեշտին միջոցը գտած էր. ու-
րով պիտի կրնար մեանիլ անբերութեան ա-

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՆՂԻ ԴԱՀԻՐԷ, — ԱՅՊԱՊԱՒԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊԹԻՅԷԻ ԵՒՆՔԻՆ ԴԷՄ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Հայկեանքի հոգեւոր պետ Մաթաթեոս Եպիսկոպոս որ անցեալ շաբթուան մէջ հոս ժամանած էր, շաբթ օրը կէսօրէն առաջ Ապարիկ Պաշտօնին մէջ Ն. Բ. Խաթիւն կողմէ ընդունուեցաւ և Ն. Բարձրութեան յանձնեց Մեծնիք Կայսեր մի նամակը:

Մաթաթեոս Եպիսկոպոսին կ'ընկերանային բազմաթիւ հետեւորդներ որոնց մէջ կը տեսնուէր Հայկեանքի կայսեր մի իրիկնապահը նաև քանի չափ հապէշ նիզակաւոր զօրքեր:

Ն. Բ. Խաթիւն առաջին արարողական Սպիտ Պէյ Զիւլֆիկար պաշտօնական չորս կողմերով գնաց անկողն Մաթաթեոս Եպիսկոպոսը և իր հետեւորդները և մինչոյ պատիւներով զանոնք վերստին Շուպրա առաջնորդեց:

Կարբին կը հետեւէին հեծելազօրաց խումբ մը և Եպիսկոպոսի հետեւորդներէն հապէշ զօրքեր:

Ն. Բ. Խաթիւն շաբթ օրը տեսակցութիւն մը ունեցաւ Անգլիոյ գործակալութեան առաջին բարտուղար Պ. Մէնսֆելտը և Ֆինտլէյի հետ:

Նոյնպէս շաբթ օրը կէսօրէն յետոյ Ն. Բ. Խաթիւն Սիւրի Վլադիմիրովիչ Մեծ Դոքտին այցելութիւնը ընդունեց և քիչ վերջը անոր փոխարէն այցելութեան գնաց:

Ն. Բ. Խաթիւն անցեալ օր մասնաւոր ունկնդրութիւն մը շնորհեց Վսեմ. Ապտէլ Ռահիմ պէյ Խամիի որ Զապարկատէն նոր հասած էր: Զապարկատ Կարմիր ծովու վրայ պզտիկ կղզի մըն է վերջերս Տայրա խառնայի պաշտօնատան թողուած, և ուր Ն. Վ. Ապտէլ Ռահիմ պէյ տասնընկուորորուան չափ անցուցած է:

Ապտէլ Ռահիմ պէյ Ն. Բարձրութեան ժառանգ թանկագին քարերու շատ մը նըմոյշներ օրը այս կղզիին մէջ դրոշմուած են և շատ գեղեցիկ գոյն մը ունին:

Արդէն 30 հոգի զրկուած են Զապարկատ և առաջին խուզարկութեանց արդիւնքը լիովին կը բաւէ այս առթիւ եղած ծախքերը գոցելու համար:

Զմրոխտը՝ գրեթէ գետին երեսը կը գտնուի հոն և աւելի խորունկ խաւերու մէջ կապարի և երկաթի երակներ գտնել կը յուսացուի:

Աղեքաանդիոյ Խառն գետաբաններու նախագահ ատենին առջև այս ամսոյ մէջ պիտի տեսնուի Աւստրիական Լոյտի ընկերութեան կողմէ Մեծաբլրի Մարեթիմ ֆերմանական ընկերութեան զէմ, «Գոնկո» շո-

ռանց իր բարեկամութիւն ամենաթեմէն տաւարկոյն անգամ ունենալու իր մասհոգ գործովը, փաքթիկ աղջիկը սիրտ առած էր, ծիրախաւ մէջտեղ կ'եղար, զինքը կ'առնէր կը տանէր, առանց մէկը զարմանալու անգամ ժամանակ ունենալու: Հարէմներուն մէջ շատ խեղճ աղջիկներ այսպէս կը մեռնին, շատ անգամ զոհեր ցոխութեան և բանաւարգեման: Մէկ հոգի մըն ալ պիտի երթար... որի հոգ:

Քանի մը վայրենեւն, պաղիւր զգաց, զգաց որ ցորտը հասաւ մինչև սիրտը, որուն բարեխառնեքը հազիւ կը լուռէին: Հեղձուի զգայութիւն մը կոկորդը ճնշեց. ոտքերը, խեղճ արիւնոտած ոտքերը ալ չէին ցաւեր, թմրած, սառած, արդէն գոցեց իմն մնած. ու ծանր, անուսանելի բուն մը եկաւ արտահանուցները փակել: Զգաց

զենաւորն «Գլխաւոր շոգեմատու» վրայ երթալով տեղի ունեցած ընդհարումէն յառաջ եկած վնասուի հատուցման համար բացուած դատ մը:

«Գլխաւոր» նաւուն և ամբողջ բեռնուն կրած վնասները որոշելու համար կարգուած՝ ընդիմադէտները իրենց տեղեկագիրը ներկայացուցած են դատարանին: Դատարարութեան ծնունդ տուող իրողութիւնն այն է որ Մեծաբլրի ընկերութիւնը՝ երկու շոգեմատու ընդհարումը պատահական պարագայի մը արդիւնք համարելով, կը մերձէ վճարել նաւուն ապրանք կրած վնասները:

Աղեքաանդիոյ պատրիարք Տ. Ֆոթիոս ի մօտոյ Վերին Եզիպտոսի յոյն հասարակութիւնները պիտի այցելէ և մինչև Խաթիւն պիտի շարունակէ իր ընդհանր ճամբորդութիւնը:

Ռուսիոյ Պօրիս և Սիւրի մեծ գուքսերը երէկ Գահիրէն Սուէզ մեկնեցան ուսկից «Բերեմիլի» զբահարով Գոլմաթ պիտի մեկնին:

Երէկ Հայկեանքի Մաթաթեոս Եպիսկոպոսը Կէզիբէ երթալով Կարբին փաշա Ֆէհմիին յանձնեց Եթովպական Աստղ պատուանշանի մեծ ծապաւնը:

Մաթաթեոս Եպիսկոպոսը նաև պաշտօնունի յանձնելու միենոյն պատուանշանը նախարարապետ Մուսթաֆա փաշա Ֆէհմի և արտաքին գործերու նախարար Պուրոս փաշա Ղաթի:

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ն Ե Ր

ԲԻԼԵՌՈՐԻԱ, 7 փետր.— Պարիզը տարբեր մօտ Գոնիւր 31ին երկու զբահարատ կառավարներու ընդհարման միջոցին 5 հոգի մեռած և 27 վիրաւորուած են:

ԼՈՆՏՈՆ, 7 փետր.— «Թայմ» Բլեքին կը տեղեկանայ թէ ի բաց առեալ Շանթանիկի հանքերու վրայ իշխանութիւնը, Գերմանիոյ բոլոր ուղածները տրուած են:

«Խոտիա Օֆիս» Աֆգանիստանի մէջ խռովութեան զեկուցումներ ստացած է: Այս զրոյցներուն ո'ր աստիճանի վստահելի ըլլալու մասին գետ տեղեկութիւն կը պակսի:

Կ. ՊՈԼԻՍ, 7 փետր.— Տամատ Մահմուտ փաշա ի բացակայութեան մահուան դատապարտուեցաւ:

ԲԱՐԻՉ, 7 փետր.— Գաղթականութեան նախարարը Երեսփոխանական Ժողովոյ Դիւանին կը յանձնէ օրինագիծ մը որով կառավարութիւնը երաշխաւոր կ'ըլլայ ճիշդութիւն—Հարար երկաթուղիի ընկերու-

որ ամեն բան լինցած էր, թէ մօտ էր մեռնելու հոգ, եթէ այդ թմրական վեճակն ինքզինքը ճողոպրելու բաջութիւնը չունենար:

Այն, ինչ աղէկ կ'ըլլար՝ եթէ այսպէս հեշտեալ բունը տանէր, առեալայն և յաւիտեանս. բայց Ժեմալէն յիշատակը զինքը արգիլեց և մինչև անկողինը բաշխուող իր թաղու ահուկը բաջութիւնը տուաւ իրեն. ոտքերը այլեւս զինքը չէին վերցնէր. պարտաւորեցաւ ծանցուրներուն վրայ սուղալու, բարձր ժամը մը կըցաւ իր սենեակը հասնել:

Այն ժամանակ, պտուկեցաւ, հանգարտ, աչքերը լայնաբաց և հաստատուած առտուողին որուն վրայ ցայտակարծեղ լուսնը զին բոլորակ մը կը յօրինէր:

Ընդհուպ տնիւր վերստին երեցաւ, այնչափ սաստիկ որ աղջիկը կը հետը, զէմքը

թեան որպէս իրարմայ զին շինու-թիւնը աւարտել և անգլիական ուսանողա-տներուն հաշիւները կարգադրել: Այս կերպի յիշեալ գ'ընդուն ֆրանսական հետաքրքիրն մը պիտի ըլլայ:

ԼՈՆՏՈՆ, 7 փետր.— Դիւանի նիստի Պ. Սիւրի Գարբ մեռաւ:

ԲԱՐԻՉ, 7 փետր.— Գաղթային նախարար Պ. Տըքը Երեսփոխանական Ժողովին օրինագիծ մը պիտի ներկայացնէ որպէս իր կառավարութեան և եթովպական երկաթուղիներու ընկերութեան միջև ըստ ժողովրդեւ պայմանագրութեան հաստատութիւն շնորհէ ընկերութիւնը ի վիճակի գնելու համար ճիշդութիւն Ատիս-Ապապո երթալից գինը շինութիւնը փութացնելու:

ՌԻԹԵԼԻՍԹ, 7 փետր.— Պ. Պ. Վէստլըս և Վոլմարէն հոս եկած են նախագահ Գրեկերի Տր. Լէյտտի և Պ. Ֆիշերի հետ խորհրդակցելու համար:

ԱՅԼԵՆԴ, 8 փետր.— Խորհրդարանը վիճարանեցաւ նախարարութեան սահմանադրականութեան խնդրոյն վրայ:

Վերջ ի վերջոյ վստահութեան օրակարգ մը բուժարկեց 31ի զէմ 132 ձայնով:

Ս. ԲԵԹԵԼԵՄՈՒԼԻ, 8 փետր.— Աւստրիոյ Ֆլորինանոս գահաժառանգ Արլուրը հոս հասաւ:

Չարը շատ սիրալի ընդունելութիւն մը ըրաւ իրեն:

ԳԵԲԹԱՌԻՆ, 8 փետր.— Ապստամբներու հրամանատար Մարէ Գոնիւր 31ին գերի բռնուեցաւ:

ՍԷՆԹ ԷԼԷՆ, 8 փետր.— Լան հրամանատարը իր և իր զինուորներու կողմէ առաջարկեց ծառայել Մեծն Բրիտանիոյ բանակին մէջ:

Ս. ԲԵԹԵԼԵՄՈՒԼԻ, 7 փետր.— Ֆրանսիա Ֆլորինանոս Արլուրին գաղտնիք ձեռնարկ կուտայ երկու երկրներուն պաշտօնական և արիւ թերթերու մէջ ամենալաւ զգացումներով ներշնչուած յօդուածներու հրատարակութեան: Աւստրո-Հունգարական մամուլին միաձայնութիւնը որուն կը միանան նաև Բալկանական թերթերը, շատ ուշադրաւ է: Ատի վերաբերել է մանաւանդ Գերմանիոյ մասին յառաջ եկած յուսակարութիւններուն, զոր օրինակ մաքսային նոր սահմանը և Վրէլէնի գաղթականութիւնը:

ԼԱՀԷՑ, 9 փետր.— Հոլանտական կառավարութիւնը Պօլը պատուիրակներուն հաղորդեց Մեծն-Բրիտանիոյ հետ փոխանակուած թղթակցութիւնը:

Հրատուոր, բերանը չոր, շրթունքները հըրատալ ծարաւ մը այրած. յետոյ, առտուան զէմ, թեթեւ խոպոտ հազ մը մէջտեղ եկաւ:

Երբ, լուսնալուսն, Ժեմալէն Սթա Ապուհայի սենեակը մթաւ, զարհուրեցաւ անոր ձայնին փոփոխութենէն, երեսին կարծրութենէն, վիճակին յանկարծաւ ծանրութենէն. զփաղակ պայքար մը կը կատարուէր աղջկանը ուղիւ հոգոյն մէջ. հիւսայ ալ կը սկսէր զղջալ իր բռնած ընթացքին վրայ, նախնիք օրուան իր վարանուններուն վրայ, ու կ'անիծէր պարտականութեան այն իր գաղափարները որ գուցէ իր բարեկամութիւն կորստեան պատճառ պիտի ըլլային:

Սթա Ապուհան իր կեանքը վտանգի ենթարկելու մղող յիմարական գործին վրայ

ԲԱԹԵԼԵՄՈՒԼԻ, (Նիւ ձիւր) 9 փետր.— Մեծ հրդէ մը բաղաւր կ'աւերէ, տուներու 26 խումբեր արդէն, կործանած են որոյ մէջ կը գտնուէին հանրային շէնքեր, գործառնութեանց ամբողջ թաղը և երկարաւ կան լուսի գործարանը: Միայն բոցեր կը լուսաւորեն բաղաւր: Բնակիչները ահաւսարափի մէջ են և հարկաւոր հոգի անպատշաճ մնացած:

Ս. ԲԵԹԵԼԵՄՈՒԼԻ, 9 փետր.— Չարը Ֆրանսիա Ֆլորինանոս Արլուրին ի պատիւ պաշտօնական հացկերոյթ մը տալով Ֆրանսիա Երկրի կայսեր կենաց շնորհակալութեամբ բաժակ պարգեց:

ԿԱՐԵԿՈՐ ԱԶԳ

Բաժանորդագրութեանց և ծանուցմանց համար զիմել թերթիս սատուաւ կարարին առ

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՄԻՐԱՆԻԱՆ
Թղթատարական Տուփ Թիւ 732

ԳԱՀԻՐԷ

Pour les abonnements et les annonces s'adresser à l'Administrateur du journal:

M. SARKIS MIRANIAN
Boîte postale N° 732

Le Caire

ՏՕՔԵՐ Ս. ԹԱՄԻՉՕՓ

Փորձառու բժիշկ արդէն Պոլսոյ և փոքր Ասիոյ կողմերը տարիններով իր արհեստը ի գործ դրած և յետոյ փարիզի հիւանդանոցներուն մէջ ներքին հիւանդութեանց համար իր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով՝ վերջերս ժամանակ մ'աւ Սոֆիայի կեդրոնական հիւանդանոցին մէջ աշխատելէ ետք, այս անգամ եկած հաստատուած է ի Գահիրէ և իր բնակութիւնը կը գտնուի Շարա-Ապուհ-Ալիզի սկիւզը Օսմանիէ գեղարանին ճիշտ դիմաց:

Կը բարձրանէ նաև զանազան տեսակ ջղային տկարութիւնները ելեքտրականութեան միջոցաւ:

Ամեն օր հիւանդ կ'ընդունի իր տունը կէս օրէ առաջ ժամը 10-12 և կէս օրէ յետոյ ժամը 3-5:

Երեքշաբթի և ուրբաթ օրերը աղքատաց ձրի դարմանում:

2-10

Կասկածելու անկարող ըլլալով, Ժեմալէն չէր տարաշուր որ աղջկանը արուած սանջանքն էր եղած միակ պատճառ անոր այժմեան հիւանդութեան. մորմարով կ'ըսէր ինքն իրեն թէ իր մէկ բաւը պիտի կրնար զայն արգիլել. ինչ վտանգ կար իրեն եթէ բրէնսին խօսելու ըլլար... տեսները թէ միթէ միայն այդ մարդուն բան մը պարտական չըլլաւ հոգարտութիւնն էր որ զինքը արգիլած էր. ոչ ապաքէն մանաւանդ իրեն իսկ տկարութեան զգացումն էր, երբ անգամ մը անոր ներկայութեանը գտնուէր... և իր զգայութեանց բռնութեանը զէմ իր բաւական զօրաւոր չըլլալուն երկիւղը:

Միթէ այս ամենը հաշուի առնելու էր, երբ այդ խեղճ աղջկան կեանքը վտանգի մէջ էր:

(Շարունակելի) Թարգմ. Յ. Սեթգիւն

Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՈՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻՍՈՒ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դրուիւնները կը գո ծաղրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցմախ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագինը և ապահովագրութեան զանազան դրուիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար գիմել ի Գաշիւրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԵ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղէքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալութիւն Գ. ԵԿԱՒՈՅ ԴԵՐ-ԴՈՐԺԱԿԱԼ Ի Գաշիւրէ

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ 3 ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՌ-ՍԱՅԻՏ

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ժգլնթացիկ հաշիւներ կը բանայ արքաւոր ամանդներու վրայ:

Յրանալի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եգիպտոսի և արաւա-սահմանի վրայ քաշուած փոխանա-կագրեր:

Աւանդ ձգուած գրամներուն փո-խարէն կանխորոշ պայմանաւժամով մեղհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՅՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՇՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻԾ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շորքը յարմար օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերէա, Իզմիր, Մի-տիլի եւ Կ. Պօլս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենդին նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղէքսանդրիա ամեն Շա-բաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԵԱՆՈՒ. — Ճամբորդները բաւական ժա-մանակ կ'ունենան շոգենաները Բի-րէա հանդիպելուն, Ալթէնը այցելել:

ՄՈՒՐԻՈՅ ԳԻԾ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօռ-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպօլիս, Մէր-սին և Իսկէնտէրու:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենդին նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղէքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տարեքալի օրը անգամ մը՝ երթեկի կարմիր ծառնէկնք օրը անգամ մը՝ երթեկի կարմիր

Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՒՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար գիմել ընկերութեան Աղէք-սանդրիոյ, Բօռ-Սայիտի, Սիւէզի և Գաշիւրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

ՅԱՆՁՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԱԿԱՑԵԱՆ Ի ԳԱԶԻՐԷ

Գաշիւրէն և չըճականերէն կ'ընդունուին՝ Պօլս, Վենետիկ և արաւսահմանի ուրիշ կեդ-րոններ գտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրի, Պրոնշուրի վիճակահանու-թեանց տոմսակներու, Եգիպտական Քրէտի Ֆօն-սիէի, Բոմբէյի երկաթուղւոյ բոմբէյներու, և գարձեալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերա-բերեալ ապագայքները ըլլալու են կանխիկ փոս-թի մէջ: Գիրքերու համար կարելի է նա-խապէս կէսը զրկել և մնացեալը «գոնթո ում» պուրքման» վճարել այն պահուն, երբ յանձ-նարարուածները զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 զրշ. արժէքով յանձնարարութիւն-ներու համար Եգիպտ. Ֆ. միլիոնոց դրոշմա-թուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:

Հասցէ՝

Garabed Erzenegatsian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԵՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱԶԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց հասար:

Չափի վրայ գգեսներ, շուագոյն պայմաններով:

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՋ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍՈՅ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաներով

ԱՆԲԸՐԷՕՐ ՆԻՔՕԼՍ. տրղթ. թօն. 5500	2ինՍՉՈՅ տարողութիւն թօն. 5500
ՐԷՆ ՕԼԿԱ. " " 5500	2ԱՐ " " 5500

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ յանաւոր մեկնում Աղէքսանդրիայէն դէպ ի Օտէա, հանդիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԻՋՄԻՐ, ՏՆՏՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ տը-կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաներուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵՒ ՇՈՎՈՒ ՍՈՒԱԿԱՆ ԵՋԵՐՔՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՋՈՅԻ ՇՈՎ:

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ յանաւոր մեկնում Աղէքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅՈՒ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐ-ՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐ-ՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՍԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղէքսանդրիա, Բիւրասան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատուալ խորվական Հրամանագրով
25 Գունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլլին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գաշիւրէ, Մասնաճիւղեր. Աղէքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Աղգային Դրամատունը կըն-դունի տուեղներ, դրամ փոխ կուտայ և ընթա-ցիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէ-քաւոր թուղթերու վրայ:

Կը դնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ:

ԴԻՈՒՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծ-մունք, պնդութիւն և փոխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ա նն ճաշէ վերջ ՐԷԿԼԻՈ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազդու դեղէն մէյմէկ քիչ առնել:

ՐԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ տեղաւային դե-ղերու նման չի խանգարի ստամբուր:

Կը ծախուի ամեն մեծ դեղարաններու մէջ:

54—316

